

## ՆԵՐԱԾՈՒԹԻՒՆ

### INTRODUCTION

*Աստուածիմաստութիւն* եզրոյթի հայերէն բառակերտումը յառաջացած է հին յունարէն theosophía (յուն.՝ θεοσοφία) բարդ բառի արմատական թարգմանութենէն եւ կարճ բացատրութեամբ մը, ան կը նշանակէ «աստուածային իմաստ(ուն)ութիւն»:

*Աստուածիմաստութիւնը*, որպէս բնորոշում կամ սահմանում հաւաքական անուանումն է աստուածաբանական ու փիլիսոփայական այն մտածողութեան, ուր *խորհրդապաշտութեան* (Mysticism), *ներհայեցողութեան* (Intuition) կամ *հայեցողութեան* (Contemplation) միջոցներով, զԱստուած ճանչնալու կամ աստուածայինը իմանալու անմիջական ձգտում մը կայ:

Նախ պարզաբանեմ վերոյիշեալ երեք միջոցները.-

- **խորհրդապաշտութիւն**<sup>[Թ-25]</sup> (Mysticism<sup>1</sup>) հասկացութիւնը կը բնորոշուի՝ աստուածային կամ բացարձակ իրականութեան մը փորձառութեան վկայութիւններով կամ արտայայտութիւններով կամ նմանօրինակ փորձառութիւններ ունենալու ժրաջան ճիգով: Իսկ մեր ամենօրեայ օգտագործման եւ հանրամատչելի գրականութեան մէջ, *խորհրդապաշտութիւն* եզրոյթով կը հասկնանք այն հոգեկան եւ հոգեգմայլ ապրումները, զորս գիտականօրէն կարելի չէ առարկայացնել կամ բացատրել եւ հայեցողութեամբ (Contemplation) ու հասկացութիւններով (Concept) կարելի չէ իմանալի ու ճանաչելի դարձնել:

---

**1** **խորհրդապաշտութիւն** (Mysticism).-

*խորհրդապաշտութիւն* եզրոյթի հիմքը «խորհուրդ» = Mystic (յուն.՝ mystikos) հասկացութիւնն է, որ պէտք է զանազանել «*խորհրդանշապաշտութիւն*» (Symbolism) եզրոյթէն, որու հիմքը Symbol-ի հոմանիշ՝ խորհրդանիշը կամ խորհրդանշանն է: